| | | |
|---|---|---|
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ <<ՎԵԴՈՒ ԾՆՆԴԱՏՈՒՆ>> ՓԲԸ | | РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРАРАТСКАЯ ОБЛАСТЬ г.ВЕДИ ВЕДИНСКИЙ РОДДОМ ЗАО |

ք. Վեդի, Գայի 1
N 106

234 2-16-23
ՀՎՀՀ 04104551

<< 24>> հոկտեմբերի 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ -11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

**Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում «ՎԾ-ՇՀԱՊՁԲ-14/09»**

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել **«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ, ք. Վեդի, Գայի 1, հաշվապահություն, մինչև 2014թ նոյեմբերի 6-ը , ժամը 10:00-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գևորգ Ամիրջանյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ՝ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն **«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի շենքում, ք.Վեդի, Գայի 1 հասցեով, հաշվապահությունում, 2014թ. նոյեմբերի 6-ին, ժամը 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում **«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի կարիքների համար **«էլեկտրոտեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային սարքավորումներ»** ապրանքների ձեռքբերումը:

**«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի կարիքների համար **«էլեկտրոտեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային սարքավորումներ»** մատակարարման (մատուցման, կատարման) (որոնք կազմված են 3 չափաբաժիններից). տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանները ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներակայացված է հրավերի (ծանուցման) N1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N5). ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային հասցեն.

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ՎԾ–ՇՀԱՊՁԲ -14/09» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

*Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:*

Մասնակիցների կողմից որպես համարժեք ապրանքներ ներկայացնելու դեպքում գնային առաջարկում ներառել նաև դրանց տեխնիկական բնութագրերի նկարագրությունները .պարտադիր նշելով <<համարժեք>> բառը:

Հայտնում ենք որ. հրավերով ներկայացվող ապրանքների տեխնիկական բնութագրերի հիման վրա Ձեր գնառաջարկում անհրաժեշտ է պարտադիր կերպով ներկայացնել հստակ այն ապրանքատեսակը /ապրանքի անվանում, չափման միավոր, փաթեթավորում/ որը հաղթելու պարագայում կնշվի գնման պայմանագրում, և կլինի անփոփոխ պայմանագրի գործողության ողջ ընթացքում:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

**«Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _veducnndatun@mail.ru:**

*Հարգանքով*

«Վեդու ծննդատուն» ՓԲԸ

Տնօրեն՝ Վ.Մաթևոսյան

**Կատարող՝ Գևորգ Ամիրջանյան**

**Գնումների համակարգող, հեռ.091-27-71-56**